ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՒ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենսդրական նախաձեռնության (Այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

Նախագծով առաջարկվում է հանել այն հասկացությունները, որոնք ոլորտը կարգավորող օրենսդրությանն ընդհանրապես հայտնի չեն և, միևնույն ժամանակ, հասկացութային շփոթից խուսափելու համար կիրառել միասնական տերմինաբանություն: Նշվածը տեխնիկական փոփոխություններ են, որոնց ապահովման նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, իսկ 3-րդ մասից հանվել են հասկացություններ:

Պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով արգելված արարքների մեծ վտանգավորությամբ՝ Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով սահմանված սանկցիաներում կատարել փոփոխություն, որի արդյունքում 327-րդ հոդվածի 1-ին մասով արգելված արարքը կդառնա ծանր հանցագործություն, իսկ որակյալ հանցակազմերի համար սահմանված ազատազրկման ձևով պատժի նվազագույն և (կամ) առավելագույն շեմերը կբարձրացվեն:

Խստացման համաչափության տեսանկյունից նշենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետութան Սահմանադրության (այսուհետ՝ Սահամանադրություն) 78-րդ հոդվածի համաձայն՝ *«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:*

Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները»:

Այս դրույթը վերաբերելի է ինչպես խստացմանն, այնպես էլ մեղմացմանն ու մեղմ վիճակի պահպանմանը:

Գտնում ենք, որ առկա կարգավորումները չափազանց մեղմ են և խստացումները համաչափ են և որպես հիմնավորում անհրաժեշտ է դիտարկել քրեական օրենսգրքով արգելված մեկ այլ արարքի դիսպոզիցիան և սանկցիան:

Նշված վերջին համեմատության օբյեկտ հանդիսացող արարքն արգելված է ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով, որը դասալքությունն է և այն բնորոշվում է որպես զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը:

Օբյեկտով բնութագրելիս քննարկվող հանցագործությունն ուղղված է զինվորական ծառայության կարգի դեմ, օբյեկտիվ կողմից այն կարող է դրսևորվել ինչպես ակտիվ գործողություններով, այնպես էլ անգործությամբ, սուբյեկտիվ կողմից այն բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և պարտադիր տարր է հանդիսանում ֆակուլտատիվ տարր համարվող նպատակը, որը կայանում է զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու մեջ, իսկ շարժառիթները նշանակություն չունեն արարքի որակման համար:

Նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան ծանր է՝ պատժվում է ազատազրկմամբ երեքից վեց տարի ժամկետով, իսկ որակյալ հանցակազմերից մեկի համար նախատեսված են կրկին ծանր՝ ավելի բարձր նվազագույն և առավելագույն շեմերով պատժաչափ, մյուսն համարվում է առանձնապես ծանր հանցագործություն:

Ահա քննարկվող արարքի հետ համեմատելիս պարզվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով արգելված արարքները նույնպես ուղղված են զինվորական ծառայության դեմ՝ մասնավորապես ՀՀ զինված ուժերի կոմպլեկտավորման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ, օբյեկտիվ կողմից բնութագրվում է անգործությամբ, սուբյեկտիվ կողմից՝ ուղղակի դիտավորությամբ:

Քննարկվող երկու հոդվածներով արգելված արարքները հանցակազմի նշված երեք տարրերի համեմատության մեջ հանդիսանում են միևնույն վտանգավորությամբ արարքներ, իսկ օրենսդիրը միայն դասալքությունն է սահմանել ծանր հանցագործություն:

Նշենք նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածով արգելված արարքի սուբյեկտը հատուկ է, որի համար օրենսդիրը հնարավորություն է ունեցել ֆիքսելու ֆակուլտատիվ տարր հանդիսացող նպատակը, իսկ 327-րդ հոդվածում այն չի կարող նշվել, քանի որ հերթական զորակոչից խուսափելու խնդիրն է դրված, բայց մենք գիտենք, որ, որպես կանոն, խուսափում են ոչ թե հայտարարված զորակոչից, այլ ընդհանրապես բոլոր զորակոչերից, քանի որ այն կատարում են արտագաղթի եղանակով: Այսինքն, ևս մեկ արարք, որն ուղղված է երկրի անվտանգությանը: Այս եղանակը չի կարող նախատեսվել որպես պարտադիր տարր միայն այն պատճառով, որ, սովորաբար, զինվորական ծառայությունից խուսափողները հատում են ՀՀ սահմանը դեռևս քրեական պատասխանատվության չհասած տարիքում, այսինքն, երկիրը լքելու պահին որևէ կերպ չի կարող որակվել նրանց արարքը, հետևաբար, նաև եղանակը, սակայն մենք չենք կարող հաշվի չառնել այն և չհամարել վտանգավոր: Նման կերպ չենք կարող որակել նաև իրենց

ծնողների կողմից օժանդակությունը, որով դուրս են հանում երկրից, քանի որ նույն պատճառն է առկա՝ չեն հասել քրեական պատասխանատվության տարիքի, հետևաբար, նաև չկա հանցակցություն, բայց կրկին չենք կարող հաշվի չառնել այդ հանգամանքը Նախագիծը քննարկելիս: Այսպիսով փաստացի ունենում ենք և՛ նպատակ, և՛ եղանակ, և՛ օժանդակություն, որոնք, սակայն քրեաիրավական նշանակություն չեն ունենում, բայց ինքնին վտանգավորություն ունեն: Այս ամենից ելնելով, գտնում ենք, որ արտագաղթի միջոցով զինվորական ծառայությունից խուսափելը չի կարող ունենալ մեկ օբյեկտ և նրա լրացուցիչ օբյեկտն իրականում նաև կարող ենք համարել պետության անվտանգության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Այսպիսով, չեն կարող 362-րդ հոդվածով արգելված արարքները համարվել առավել մեծ վտանգավորություն ունեցող և արդարացված է 327-րդ հոդվածի վերաբերությամբ խստացումները նաև համաչափության տեսանկյունից:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ քննարկվող արարքը ծանր հանցագործություն համարվելուց հետո այն ունենալու է առավել երկար վաղեմության ժամկետներ:

Դրա անհրաժեշտությունը հիմնավորելու համար դիտարկենք քրեական օրենքում վաղեմության ժամկետներ նախատեսելու հիմքում դրված գաղափարը.

Որքան շուտ հետևի պատիժը հանցագործության համար, այնքան այն ավելի արդյունավետ կլինի և կծառայի **պատժի նպատակներին**: Իսկ եթե անցնում է որոշակի ժամանակահատված, և անձը չի պատժվում, իսկ նրա կատարած արարքը շարունակում է որպես հանցագործություն մնալ, ապա անձի նկատմամբ պատիժ նշանակելը դառնում է անիմաստ, և **պատիժը** զրկվում է **իր նպատակներին ծառայելու ունակությունից**: Բացի այդ, եթե իրավապահ մարմիններն օբյկտիվ պատճառներով չեն կարողացել բացահայտել հանցագործությունը թարմ հետքերով, ապա նրանք հաճախ զրկվում են նախկինում կատարված **հանցանքները բացահայտելու հնարավորությունից:** Վերջինի վերաբերությամբ նշենք, որ քննարկվող հանցագործությունները բացահայտելիս իրավապահները խնդիրներ չեն ունենում, քանի որ արարքներն հիմնավորվում են զինվորական կոմիսարիատներում առկա փաստաթղթերով՝ մասնավորապես կցագրման արդյունքներով և հիմնավորումներով առ այն, որ անձը ՀՀ քաղաքացի է, ֆիզիկապես առողջ է, հասել է քրեական պատասխանատվության տարիքի: Մյուս առումներով շարունակենք հետևյալը.

Եթե քրեական օրենսգրքում չնախատեսվի նախորդ տարիներին կատարված այնպիսի հանցանքների վերաբերյալ գործերի կարճում, որոնք **կորցնում են իրենց սոցիալական նշանակությունը**, ապա, փաստորեն, անհրաժեշտություն կառաջանա ծախսելու նյութական և ֆիզիկական հսկայական ռեսուրսներ, ինչը բացասական ազդեցություն կունենա նոր կատարվող հանցանքների բացահայտման արդյունավետության վրա:

Այս առումներով վերլուծական մեկնաբանությունը պետք է համադրված լինի պատժի նպատակների հիմքում ընկած գաղափարների հետ, քանի որ ելակետում պատժի նպատակների իրագործումն է, որին ձգտում է պետությունը՝ դատապարտելով հանցանք կատարած անձին և կիրառելով նրա նկատմամբ այս կամ այն պատիժը:

Պատժի նպատակները պայմանականորեն բաժանելով երկու ուղղությունների՝ պատժի բացարձակ տեսություններ, որոնք պատժի նպատակը համարում են անցյալին ուղղված բացարձակ գաղափար՝ հատուցում կատարված ոտնձգության և հանցանք կատարած անձի պատճառած չարիքի համար, որն այլ կերպ կարող ենք անվանել նաև հատուցման տեսություն և երկրորդը՝ պատժի հարաբերական տեսություններ, որոնք ուղղված են ապագային և պատիժն ընդունում են ոչ միայն որպես հանցավոր արարքից բխող, այլև դրանով պայմանավորված, **պետության կողմից իրականացվող նպատակամղված գործունեություն**, որն այլ կերպ նաև կարող ենք անվանել օգտակարության տեսություն: Ահա վերջին տեսության համատեքստում դիտարկենք պատժի նպատակներից մեկի՝ կանխման մաս հանդիսացող՝ **ընդհանուր կանխման տեսությունը**: Այս տեսության գործնական նպատակների նշանակությունը հիմնավորող փիլիսոփայական հայեցակետերից նշենք անգլիացի գիտնական Ի.Բենտամի հայացքները, որով Բենտամն առաջ էր քաշում պատիժ չկիրառելու երեք հիմնական պայմաններ: Առաջին՝ պատիժ չի կարող կիրառվել, եթե դրանով չի փոխհատուցվում հանցագործությամբ պատճառված վնասը, երկրորդ՝ **կիրառվող պատժի ծախսերը պետության համար չեն կարող լինել ավելի թանկ**, քան հանցագործությամբ պատճառված վնասը, և երրորդ՝ **եթե վնասը կարող է հատուցվել ավելի արդյունավետ եղանակով**: Այս առումով հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտող հակառակորդ ունեցող երկրի համար քննարկվող հանցակազմի օբյեկտը առավել մեծ պաշտպանություն է պահանջում, քան այս պահին առկա է գործող կարգավորմամբ, այսինքն, վաղեմության ժամկետի մեծացումն արդարացված է առաջին հերթին այն հանգամանքով պայմանավորված, որ հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտող հակառակորդ ունեցող պետության համար պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու դեպքում, անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել հանրորեն բարձր վտանգավորություն ունեցող արարքի կատարումից, կիրառվող պատժի ծախսերը երբևէ չեն կարող համարվել ավելի թանկ, քան խուսափումով պայմանավորված վնասն ուղղված պետության անվտանգությանը, **այսինքն դա պետք է լինի, ինչպես վերը նշված է, պետության կողմից նպատակամղված գործունեություն սեփական երկրի անվտանգության գերադասմամբ**: Ընդհանուր կանխումն ուղղված է այլ անձանց կողմից նոր հանցագործությունների կանխմանը, քանի որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող հարկադիր ներգործությունը կասեցնում է այլ անձանց նմանատիպ հանցավոր ոտնձգությունները: Այս կանխարգելիչ ներգործությունը ձևավորվում է երեք փուլերով՝ **օրենքի ընդունում**, պատժի նշանակում և պատժի կատարում:

Օրենքի ընդունումը, քանի որ այն ավելի է խստացնում պատասխանատվությունը, կլինի առաջնային և հստակ ազդակ ուղղված հասարակության այն մասին, որը չի գիտակցում պետության առջև դրված անվտանգության խնդիրը:

Ներկա պահին չկա վերը նշված արարքների համար պատասխանատվությունից ազատող որևէ նորմ, որը նաև առաջացնում է հայրենադարձության խնդիր, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով արգելված արարքը կատարած անձինք, վերադառնալով Հայաստանի Հանրապետություն, ենթարկվելու են քրեական պատասխանատվության, իսկ առաջարկվող նախագիծն ուղղված է կարևորագույն երկու խնդիրների լուծմանը, առաջինը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության բնագավառում ծագող հասարակական հարաբերությունների պաշտպանության նպատակով խստացվում են քրեաիրավական կարգավորումները՝ երկարաձգելով 327-րդ հոդվածով արգելված արարքների համար սահմանված վաղեմության ժամկետները և բարձրացնելով ազատազրկման ձևով պատիժների նվազագույն և առավելագույն չափերը, ինչը զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով արտագաղթի լավագույն կանխարգելումն է, որը հետադարձ ուժ չունի: Երկրորդը՝ հայրենադարձության ապահովման նպատակով հետադարձ ուժ ունեցող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածում լրացվող նոր խրախուսող նորմն է:

Պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարի վճարումը որպես քրեական պատասխանատվությունից ազատման հիմք տրամաբանական է, քանի որ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած անձին փաստացի փոխարինում է պայմանագրային զինծառայողը, որի նկատմամբ պետությունը կրում է բազմաթիվ պարտավորություններ՝ այդ թվում վարձատրության պարտավորություն և դրա չափով վճարումը որոշակիորեն վերականգնում է սոցիալական արդարությունը: Նշվածը ամենևին չի նշանակում, որ նպատակը գումարի գանձումն է, Նախագծով ֆիքսվում է գաղափարը և հիմնավորումն առ այն, որ դա ուղղված է առաջին հերթին սոցիալական արդարության վերականգնմանը: Այդ է վկայում նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 32-րդ հոդվածում կատարվող լրացումը, որով նախատեսվում է սահմանել, որ քննարկվող գումարը ենթակա է վերադարձման, եթե վճարողը երեք տարվա ընթացքում անցել է պայմանագրային զինվորական ծառայության երկու տարի ժամկետով: Այս պարագայում նպատակը ոչ միայն սոցիալական արդարության վերականգնումն է, այլ նաև անձի վերասոցիալականացումը: Փաստացի, ստացվում է, որ առանց պատժի կիրառման իրագործվում են պատժի նպատակները: Այս նպատակի մասնավորեցումն հետևյալն է. պատիժն, ի տարբերություն պետական հարկադրանքի այլ միջոցների, առաջացնում է յուրահատուկ իրավական հետևանք՝ դատվածություն, որը պատժի ինքնուրույն հաջորդ տարրն է:

Պատիժը և նշված ինքնուրույն տարրը միշտ կապված են դատապարտյալի իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ, պատճառում են բարոյական զրկանքներ և զրկում են անձին որոշակի բարիքներից, և իրագործելով այն՝ պետությունը, այնուամենայնիվ, նույնպես կրում է որոշակի կորուստներ՝ կապված արդարադատության իրականացման, պատժի կատարման և այլ հանգամանքների հետ: Սոցիալական արդարության վերականգնումը հնարավոր է, եթե հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվի այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և Նախագծով առաջարկվող կարգավորումները հենց սոցիալական այն գործընթացն են լինելու, երբ իրացվում են անձի որակական փոփոխություններ, հայացքների վերակառուցում, որն արտահայտվում է իրավահպատակ վարքագծում, այն վերասոցիալականացմանն ուղղված անմիջական գործընթաց է՝ վարքագծի նորմերի և կանոնների, անհատական արժեքների նոր համակարգ, որը տարբերվում է տվյալ անհատի մոտ նախկինում ձևավորված արժեքներից, ուստի այն նոր դերերի, հմտությունների յուրացումն է հասարակական բարոյականությանը չհամապատասխանող նախկինի փոխարեն՝ այն նախկինի, որի դրսևորմամբ խուսափել էր պարտադիր զինվորական ծառայությունից: Կարգավորումը նախատեսվել է այնպես, որ քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո, եթե անձը ցանկանում է վերադարձնել իր վճարած գումարը, պայմանագրային ծառայության պետք է անցնի երեք տարվա ընթացքում: Այս ժամկետի սահմանափակումը նախատեսվել է երեք նպատակով՝ որպեսզի շուտ հետևի վերասոցիալականացումը քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո, անձը կրկին չդիմի արտագաղթի, քանի որ այլևս հայրենիքում կունենա վարձատրվող զբաղվածություն և երրորդը այն գաղափարն է, որ որքան էլ առկա է զինվորական ծառայության տարիքային սահմանափակում, այնուամենայնիվ նախընտրելի է, որ ծառայողն ավելի երիտասարդ լինի և այս պարագայում այն որոշակիորեն կապահովվի:

Շատ դեպքերում զորակոչիկները ստանալով տարկետում՝ խուսափում էին վերջին զորակոչերից և արդեն ուժը կորցրած «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վճարումը կատարվում էր խուսափած զորակոչերի դիմաց, վճարվող գումարը չափազանց քիչ էր կազմում, արդյունքում հետևությունն այն է, որ հաշվի առնելով, որ քննարկվող արարքը տևող է, չպետք է այն գնահատել դրվագներով կամ հատվածներով և պատճառված վնասը հարթող վճար սահմանվելու դեպքում այն պետք է միանվագ լինի:

Այս կարգավորումն ընդունվելու դեպքում լուծվում է նաև քրեաիրավական խնդիր, քանի որ Օրենսգրքի քրեական պատասխանատվությունից ազատելու 72-րդ հոդվածով սահմանված ինստիտուտն անմիջականորեն կարող է կարգավորել քննարկվող հասարակական հարաբերությունները:

Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Համաձայն Օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **այլ տեսակի** հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից **ազատվում է** միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով **հատկապես** նախատեսված դեպքերում:

Նախկինում քրեական պատասխանատվությունից ազատվում էին մեկ այլ ինտիտուտի կիրառմամբ՝ իրադրության փոփոխման հիմքով, որն իմպերատիվ բնույթ չուներ և վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանն էր թողնված, բացի այդ այն տարատեսակ մեկնաբանությունների առիթ էր տալիս, քանի որ շատ մասնագետներ չեն համարում որևէ նորմատիվ ակտով սահմանված որևէ հատուցման վճարումը իրադրության փոփոխում, հետևաբար, դրանով չի վերանում արարքի վտանգավորությունը, իսկ առաջարկվող նախագիծն ընդունվելու դեպքում կարող է կարգավորել քննարկվող հասարակական հարաբերություններն՝ առանց հենվելու այլ նորմատիվ իրավական ակտի վրա:

Օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե պարզվի, որ իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը **կարող են** հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (…) 74-րդ հոդվածով նախատեսված դեպքում:

Մեջբերված նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի կիրառման հիմքն արդեն փոփոխված իրադրությունում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու աննպատակահարմարությունն է:

Վկայակոչված քրեաիրավական դրույթի իմաստով իրադրությունը քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների այն վիճակն է, որոնց անձը ներգրավված է եղել հանցանքի կատարման պահին: Ուստի, իրադրության փոփոխությունը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, հասարակական հարաբերությունների այդ վիճակի որակական, կայուն փոփոխությունն է, որը տեղի է ունեցել որևէ իրադարձության հետևանքով:

Իրադրության փոփոխման հետևանքով անձի՝ հանրության համար վտանգավորության կորուստը ենթադրում է այնպիսի փոփոխությունների

առկայություն, որոնց արդյունքում հանցանք կատարած անձը դադարում է հանրության համար վտանգավոր լինելուց: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործությունից հետո անձի կյանքի և գործունեության պայմաններում կատարված փոփոխությունները զրկում են նրան հասարակական հարաբերություններին այնպիսի վնաս պատճառելու հնարավորությունից, ինչպիսին նա պատճառել է նախքան այդ փոփոխությունները: Այլ կերպ՝ կատարված փոփոխությունները պետք է էականորեն նվազեցնեն նոր հանցանք կատարելու՝ անձի օբյեկտիվ հնարավորությունը:

Իրադրության փոփոխման հետևանքով հանցավոր արարքի հանրային վտանգավորության կորուստը ենթադրում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում այնպիսի էական փոփոխությունների առկայություն, որոնց արդյունքում հանցավորի արարքը դադարում է հանրության համար վտանգ ներկայացնելուց՝ անկախ այն բանից, որ տվյալ պահին գործող քրեական օրենսգրքով այդ արարքը դեռևս համարվում է հանցավոր:

Իրադրության փոփոխման հետևանքով անձի կամ արարքի հասարակական վտանգավորության դադարման հիմքը չի կարող կիրառվել այն դեպքերում, երբ հանցանք կատարած անձը գործուն զղջում է կամ **որևէ ձևով հարթում է պատճառած վնասը**, քանի որ դրանք քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմքեր են:

Տվյալ պարագայում յուրաքանչյուր զորակոչի համար նախկինում սահմանված գումարի վճարումը համարվում է պատճառված վնասի հարթում և ընդհանրապես վիճելի են դառնում իրադրության փոփոխման և դրա արդյունքում հանրորեն վտանգավոր արարքի հանրային վտանգավորության դադարման վերաբերյալ հետևությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածում նշված «**այլ տեսակի**» բառերը վերաբերում են ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին, այսինքն, չկա հակասություն 327-րդ հոդվածի 1-ին մասը ծանր հանցագործություն դարձնելու և գործուն զղջալու ենթահնստիտուտի միջև, «**ազատվում է**» բառերն ուղղված են բնորոշելու իմպերատիվ բնույթն՝ ի տարբերություն իրադրության փոփոխման հայեցողական կիրառման ինստիտուտի, «**հատկապես**» բառը վերաբերում է հատուկ մասում նշմանը, ինչի նպատակով լրացվում է 327-րդ հոդվածի նոր 4-րդ մասը:

Այսպիսով, Նախագծով առաջարկվող փոփոխության կատարման պարագայում քրեական հետապնդումները կդադարեցվեն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ Օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:

Խրախուսող նորմով տարբերվող մոտեցում է նախատեսվել վարժական հավաքից խուսափած անձանց համար հետևյալ պատճառով.

Ըստ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական ծառայությունը ներառում է՝ զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական **հավաքի** կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը

ներգրավումը(…):

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության ներգրավումն իրականացվում է՝

(…)

4. պահեստազորի զորահավաքային նախապատրաստության շրջանակներում անցկացվող վարժական հավաքներին կանչվելու միջոցով՝ **պահեստազորում հաշվառված** քաղաքացիների համար:

Օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ պահեստազորային զինվորական ծառայություն է համարվում պահեստազորի պատրաստության շրջանակներում սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված **վարժական հավաքների ժամանակ** իրականացվող ծառայությունը:

Ըստ Օրենքի 58-րդ հոդվածի՝ վարժական հավաքները՝ **պահեստազորի** առաջին խմբում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունները կատարելագործելու և նրանց վերապատրաստելու նպատակով իրականացվող միջոցառումներ են:

Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր հաշվառվում են պահեստազորում.

1) ժամկետային պարտադիր կամ պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված քաղաքացիները.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները.

3) սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում նշված քաղաքացիները.

4) բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած և սույն օրենքով սահմանված կարգով «լեյտենանտ» զինվորական կոչում ստացած քաղաքացիները.

5) ռազմահաշվառական մասնագիտություն ունեցող իգական սեռի քաղաքացիները.

6) Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության համակարգերից արձակված քաղաքացիները՝ նրանց շնորհված հատուկ կոչումները (բացառությամբ զինվորական կոչումների) հաշվի առնելով.

7) 27 տարեկանը լրացած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք.

8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և զինվորական կոչում ունեցող անձինք՝ ունեցած զինվորական կոչումները հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան.

9) սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց օրենքով սահմանված կարգով վճարներ կատարած քաղաքացիները.

10) օրենքով սահմանված կարգով զինվորական հաշվառման ենթակա և սույն մասում չնշված այլ կարգավիճակ ունեցող քաղաքացիները:

Ակնհայտ է, որ պահեստազորում մեծասամբ ընդգրկված են այն անձինք, ովքեր արդեն անցել կամ օրենսդրությամբ սահմանված որևէ հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից:

Վերոշարադրյալ նորմերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ

պահեստազորում հաշվառված քաղաքացիների զինվորական ծառայության ներգրավումն իրականացվում է պահեստազորի զորահավաքային նախապատ-րաստության շրջանակներում անցկացվող վարժական հավաքին կանչվելու միջոցով, և վերջինս հադիսանում է պահեստազորային ծառայության կազմակերպման ձևերից մեկը: Տվյալ դեպքում արդարացի չէր լինի խրախուսական միևնույն նորմի կիրառումը այն անձանց նկատմամբ, ովքեր արդեն անցել կամ օրենսդրությամբ սահմանված որևէ հիմքով ազատվել են զինվորական ծառայությունից, ուստի գումարի չափի հաստատումը թողնվել է Կառավարությանը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվող լրացումները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրում կատարվող լրացումների հետ և նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համալրման, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով արգելված արարք կատարած անձանց ուղղման, սոցիալական արդարության վերականգնման համար նախադրյալների ստեղծմամբ:

Նախագծով առաջարկվում է խրախուսող նորմ՝ օրենքի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած, սակայն օրենքով սահմանված տարիքը դեռևս չլրացած այն քաղաքացների համար, ովքեր օրենքով սահմանված վճարը վճարելուց հետո նախընտրում են անցնել պայմանագրային զինվորական ծառայություն, դրա ընթացքում ետ ստանալ վճարված գումարը, որից հետո հնարավորություն են ունենում զբաղեցնել նաև հանրային ծառայության այլ պաշտոններ.

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելուց հետո վերանում է ընդհանրապես հանրային ծառայության անցնելու արգելքը:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում բացի խրախուսող նորմից, նախատեսվում է լրացնել նաև խստացնող նորմ, որով Օրենքի խախտմամբ զորակոչին չներկայացած շարքային կազմի և պահեստազորի սպայական կազմի համար ծառայության ժամկետը երկարաձգվելու է մեկ ամսով՝ յուրաքանչյուր չզորակոչված (խուսափած) զորակոչի համար: Գործող կարգավորմամբ էական չէ, թե անձը քանի զորակոչից է խուսափել, նրա համար առաջանում է միևնույն հետևանքը, հետևաբար, պետք է անհատականացվի պարտավորությունը և ինչու ոչ տվյալ պարագայում՝ պատասխանատվությունը:

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվող լրացումը պայմանավորված է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվող լրացումներով: